Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՄՆ «Երեւանի N109 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկա առարկայի (11դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Համաձայն ֆինանսավորման նոր կարգի ուսուցչի վարձատրման դրույքաչափին կավելացվի լրավճար 25%-ի չափով՝ չհաշված այլ հավելավճարները:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձև 5),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերանայել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 20-ից մինչև հոկտեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 11-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի հ. 109 ավագ դպրոցում, հասցեն՝ Մարգարյան 2-րդ նրբ., 14 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (091)21-01-74, (010)34-09-44 հեռախոսահամարներով: